ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 224

ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագծերը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, որոշում եմ.

1. 06-013-0001-0013 կադաստրային ծածկագրից տարանջատված 2,7339 հա արտադրամասի հասցեն թողնել անփոփոխ՝ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գ. Ամրակից Կենտրոնական փողոց թիվ 59 արտադրամաս:
2. 06-013-0001-0013 կադաստրային ծածկագրից տարանջատված 0.13821 հա արտադրամասին տրամադրել նոր հասցե՝ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գ. Ամրակից Կենտրոնական փողոց թիվ 59/1 արտադրամաս:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021թ. 06 14
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 225

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մեր Գևորգյանի դիմումը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 0064404 վկայականը՝ կազմված 15.09.2005թ.-ին, Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թվականի հունիսի 09-ի թիվ 39 որոշումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների գնահատման հաշվետվությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 09.06.2005թ.-ի թիվ 839-Ն որոշմամբ, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի, 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 16.02.2021 թ.-ի թիվ ՎՏ/21.1/3557-2021 դիրքորոշումը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղում գտնվող՝ Մեր Գևորգյանին վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրված հողամասը ՀՀ կառավարության 09.06.2005թ. N 839-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողամաս, որը մասնավորեցման ենթակա հողամաս է՝ Գյուլագարակ համայնքի ղեկավարը որոշում է

1. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության 06-057-0073-0008 և 06-057-0073-0009 կադաստրային ծածկագրում

գտնվող 0.38578 հա հողամասը և հողամասում առկա 001 և 002 շինությունները ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Մեր Գևորգյանին:
2. Հողամասի և հողամասում առկա 001 և 002 շինությունների գնման համար համայնքի բյուջե ենթակա է վճարման՝ 4290230/ չորս միլիոն երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ:

3. Մեր Գևորգյան հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի և հողամասում առկա շինությունների ուղղակի վաճառքով վաճառելու առքուվաճառքի պայմանագիր:
4.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՄ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 06 15
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 226

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հողային օրենսգրքի» 71-րդ հոդվածը, Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թվականի հունիսի 09-ի թիվ 40 որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 12 ապրիլի 2001 թ. թիվ 286-Ն որշման 6-րդ բաժինը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետը, որոշում է.

Համայնքային սեփականություն հանդիսացող 06-027-0143-0055 կադաստրային ծածկագրի 0,5443 հա գյուղատնտեսական նապատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության և 06-027-0174-0005 կադաստրային ծածկագրի 0,540189 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասերը փոխանակել քաղաքացու սեփականություն հանդիսացող 06-013-0109-0022 կադաստրային ծածկագրի 0,9623 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակությունը հողամասի հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021 թ. 06 15
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 227

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0073-0008, 06-057-0073-0009 ծածկագրերի 0,38579 հա արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասին իր շենք շինություններով տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Կուրթան , 12-րդ փողոց, 3-րդ նրբ. թիվ 15:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՄ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21թ. 06 15
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 228

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով, որ 06-104-0125-0015 կադաստրային ծածկագրի հողամասի նկատմամբ գոյություն չունեն այլ անձանց պատկանելու վերաբերյալ որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, այն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.08.2005 թ. N 1442 - ն որոշմամբ չի ընդգրկվել համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի ցանկում, Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ ապրիլի 15-ի թիվ 24 որոշումը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 59-րդ հոդվածները, ՀՀ կադաստրի կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետը, որոշում եմ.

1.Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-104-0125-0015 կադաստրային ծածկագրի 0,37237 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և միացնել համայնքի հողային ֆոնդին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 06 16
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 229

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-104-0011-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ,ԱՐԾՐՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արծրուն Վարդանյանի դիմումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» Ա/Ձ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16 -րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2005 թ. թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ

1.06-104-0011-0009 ծածկագրի տակ գտնվող 0.1240 հա փաստացի օգտագործման հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Հրաչյա Վարդանյանի, Արծրուն Վարդանյանի և Կարինե Մելիքսեթյանի համատեղ սեփականության իրավունքը:
2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3.Վերականգնել և ճանաչել 0,1240 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտի պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ. կառուցված 46,30 քմ կիսակառույց ինքնակամ շինության նկատմամբ Հրաչյա Վարդանյանի,Արծրուն Վարդանյանի և Կարինե Մելիքսեթյանի համատեղ սեփականության իրավունքը:
4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Գյուլագարակ համայնք գյուղ Վարդաբլուր 6-րդ փողոց, թիվ 38:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՄ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021 թ. 06 16

գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 230

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Ատոմ Գագինյանի հայտը, որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համյանքի Գյուլագարակ գյուղի բնակիչ Ատոմ Գագինյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 7-րդ փողոց թիվ 6 հասցեում 2-րդ ռիսկային աստիճանի արտադրամասի կառուցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021թ. 06 16
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 231

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, հիմք ընդունելով «ՀԵՑ» ՓԲԸ-Ի կողմից ներկայացված դիմումը, «ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի կողմից մշակված աշխատանքային նախագիծը, որոշում եմ.

1. «ՀԵՑ» ՓԲԸ-ին տալ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի Հրայր Հակոբյանին պատկանող տարածում 10կվ էլեկտրամատակարարում անցկացնելու շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:
2. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՄ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21թ. 06 16
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 232

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, հիմք ընդունելով Արթուր Միկոյանի կողմից ներկայացված դիմումը, «ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից մշակված աշխատանքային նախագիծը, որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղի բնակիչ Արթուր Միկոյանին տալ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղի 3-րդ փողոց թիվ 13 հողամաս հասցեում 2-րդ ռիսկային աստիճանի ցանկապատի կառուցման շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:
2. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ **ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2021թ. 06 16
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 233

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դենդրո Գարդեն» ՓԲԸ-ի և Ալեքս Զալինյանի դիմումները, անշարժ գույքի վերավարձակալության իրավունքի գրանցման՝ թիվ 11012021-06-0042 և 11012021-06-0043 վկայականները կազմված 11.01.2020թ.-ին,Գյուլագարակ համայնքի ավագանու 2021 թ.-ի հունիսի 09-ի թիվ 42-Ա որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 06.10.2005թ 1940-Ն որոշմամբ, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ կետով, 101-րդ հոդվածով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 16.02.2021 թ.-ի թիվ ՎՏ /21.1/3557-2021 դիրքորոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ՝ որոշում եմ.

1.06-027-0193-0023 կադաստրային ծածկագրի 5,73 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել վերավարձակալ « ԴԵՆԴՐՈ ԳԱՐԴԵՆ» ՓԲԸ-ին ՝ 3882100/ երեք միլյոն ութ հարյուր ութսուներկու հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամով.

2.06-027-0183-0147 կադաստրային ծածկագրի 8,38 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել վերավարձակալ « ԴԵՆԴՐՈ ԳԱՐԴԵՆ» ՓԲԸ-ին 5677450/ հինգ միլիոն վեց հարյուր յոթանասունյոթ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամով:

3..06-027-0193-0023 կադաստրային ծածկագրի 5,73 հա և 06-027-0183-0147 կադաստրային ծածկագրի 8,38 հա հողամասերի գնման համար Գյուլագարակի համայնքապետարանի թիվ 900255105034 հաշվեհամարին ենթակա է վճարման 9559550/ինը միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:

4.Դադարեցնել Ալեքս Զալինյանի հետ 06.12.2007 թ.-ին կնքված վարձակալության պայմանագիրը /սեղանամատյան 4232/:

5.«ԴԵՆԴՐՈ ԳԱՐԴԵՆ» ՓԲԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասերը ուղղակի վաճառքով վաճառելու պայմանագիր:

6.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Տ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ